

ԲԱՏԱՆԱԿԱՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղարկող համար
 Տարեկան 12 Ժր.
 Վեցամսեայ 6 »
 Արտատնական հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Անկախի համար
 Տարեկան 3 ճր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ
 Ինտելեկտուալ տարիք
 երեսին համար 40 սակերով
 է. իսկ վերջին երեսին հա-
 մար 20 սակերով է. երեսին
 սակ ի սեպտեմբեր համար
 20 Օլո գեղջ կրկնալ :

ՇԱԲԱԹ

Նախկին և գրական զրկել
 Խմբագրությունը հասցեի
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 Իրոպիտնիս ևս չեն տրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Պուշկարիոյ համար ձեռքի
 (Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

Արտատնական համար ձեռքի
 (Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

ԱՐԴԵՕՔ ՈՐԸ

Տաճկաստանի մէջ տեղի ունեցած հայկական իրաւորանցումները, թուրք կառավարութեան խտուած թիւները և թուրք խուժանի գաղափարները ուրազանի նման վերցրին մի խոշոր հայ բազմութիւն եւ ցանցիկները ստեղծեցին, Ամերիկայի ու Աֆրիկայի մէջ :

Այդ նորեկ տարրի մեծամասնութիւնը կազմում էր ստով գրութիւն անբարոյական տարրը, որը և սկիզբը դրեց փոստային, հակաբողոքական և ստրկական ոգով մամուլի. այդ մամուլը, սուլթանի սպանալիքներից և բարկութիւններից հետո և ազատ, զերծ և է կաշկանդումից իր ուժերը լարեց ոչ թէ սուլթանի և բռնութեան դէմ, այլ յեղափոխութեան, յեղափոխականի. և իր այդ ցած գերում ու ստոր գործում աւելի առաջ անցաւ. քան բուն տաճկական և Տաճկաստանի մէջ գոյութիւն ունեցող հայ մամուլը :

Այդ գոյնի բազմութիւն թերթեր՝ փոխանակ ազատ երկրներից աւելի ազատ ոգի և մաքուր գաղափարներ տարածելու հայրենիքում տանջվող ժողովրդին քարոզեցին ստրկութիւն և աստիճանութիւն դէպի յեղափոխութիւնը : Արիւշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ այդ մամուլի մէջ աշխատողները և ղեկավարները եղան լրտեսները, դաւաճանները, ապագայ լրտեսները, անտարբերները, թրքամուլները և պահպանողականները :

Այս արտասահմանում հրատարակվող ազատ լրագրողների երկու երորդ մասը այդ ուղղութեան է պահանջում : Վայրկեաններ եղան որ կարելի էր կարծել թէ շուտ ազատասիրական ձրգտումով հայ մամուլ, արտասահմանի մէջ չը պէտք է կարողանար գոյութիւն ունենալ :

Բարեբախտաբար այդպէս չեղաւ. ցանկեցին երկու երեք հայ թերթեր, որոնք իրանց սակա-

ւաթիւ լինելը զգալով, քառապատկեցին իրանց ուժերը և կատարի պայքար սկսեցին լրտեսաստրկական գրականութեան դէմ, որը գործում է քննադական քողի տակ :

Ու այսօր այդ պայքարը մղւում է ամենակատարի կերպով : Երկու հոսանքներ կան որոշ արտասահմանի հայ մամուլի ուրեմն և հայ բնակչութեան մէջ :

Մէկի մէջ արտայայտվում է ստրկական ուղեղների բոլոր ազատ ու նեխող արտագրութիւնները, իսկ միւսի մէջ հայութեան ազատական ձգտումների բուն տենչը և ճիգերը :

Եւ այս շատ բնական է, որովհետեւ ներկայ պարագաներում հայ կեանքի մէջ միջակ, անգոյն պահանջ ունեցողներ չեն կարող լինել, այլ երկու ծայրահեղութիւններ — կամ ստրկութիւն և կամ ազատութիւն : Ով որ միջակ չէ կարող լինել, այդ երկու հոսանքներից մէկին պէտք է հնարկուի :

Այդ հոսանքներից արդեօ՞ք որը պէտք է սիրապետէ արտասահմանի հայութեան խելքն ու զգայմունքները, ահա այն ճակատագրական հարցը :

Ստրկալրտեսակա՞նք, թէ ազատակա՞նք. սուլթանը եթէ իսկապէս 500 տարվան ստրկութիւնը մեր մէջ մտցրել է ամեն բան, և երկրորդը՝ եթէ իսկապէս ազատութիւնը հայերի համար մի անհրաժեշտ պահանջ է դարձել :

ՎԱՐՊՕ

ԽԱՅԱԳՈՂՆԵՐՈՒ ԽՄԲԱԿԸ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պ. Ա. ԱԼԵՔԱՆԴՐԱՔԵԱՆԻ

Իրաւունքի 18 թուոյն մէջ ձեր հրատարակած նամակը ընթերցողներու արգահատանք, ծիծաղ և զարմանք կը չարժէ, և կը ստիպէ մեզ հրապարակաւ քանի մը խօսքեր բերել, մինչեւ ձեր սպասած բնկերական ասեմին կազմուիլը :

28 սնտուկ ապրանքներու խնդ-

րոյն մտէն անդեկութիւն ունեցողներ կարգահատին ձեր վրայ որ՝ բոլորովին զուր ջանքերով կը տապալարեկէք ինքզինքնիդ ազատել և արգարացնել այնպիսի դատապարտութիւն մը, որու ենթարկուած էք և պատուցած ձեր անձամբ և բերանացի խուսովանութեամբ, ոչ թէ կարգ մը անհասանելու ճիւղաւորութեամբ վրայ հիմնուած : Ետ ծիծաղելի է ձեր ընթացքը, որ բոլորովին կանգիտանաք թէ՛ կենդանի վկաները միշտ պատրաստ են յայտարարել այն խօսքերը որ ձեր բերնէն լսած են : Խնդրէն անդեկութիւն չունեցողներ ձեր նամակը կարգաւորով կարելի է զարմանան ըսելով ինչո՞ւ անմեղ մը (՞) կը գրպարուի : Գէշ խաղ չէր բրածնիդ անշուշտ, եթէ յաճողէիք : Ետ ցաւալի կը տեսնենք ձեր և ձեզ նմաններու գրութիւնը, այնքա՞նչ ոչ է՞ տէգը տողակին մէջ պահել, զուր ջանքեր մի՞ ընէք :

Քանի որ 28 սնտուկ իրեղէնները հայ ժողովուրդի լուսանելով գնում են, մանաւանդ այնպիսի լուսանելով որ արիւն քրտինջով էր խեղճուկ քսակին մէջ հաւաքած, քանի որ իրեղէնները ժողովուրդի օգտին համար պիտի գործածուէին, և քանի որ այդ իրեղէնները ծախուած և գրամները կարգ մը անպայան և անխիղճ խաչագողներու կողորդն անցած են, ուստի ժողովուրդը իր իրաւունքը բռնաբարում և շահերն ստանալու ըլլալն անհնարով, իրաւունք ունի ծախուած իրեղէններու ստակները խաչագողներու կողորդն գործառնելու և նպատակին գործածելու : Ուրեմն հայ ժողովուրդի ամէն զատակարգը և հայ անուն կրող ըստ օրինի իրաւանց բացարձակ աւերն է և միշտ պիտի պաշտպանէ հայ ժողովուրդի շահերը, և այդ արդէն ոչ մի կողմաւորութեան օրէնքը չարդիւրիս :

Ամիսներ առաջ լոկ անհասական պարտականութիւնս կատարելու նպատակաւ, և իր հայ ժողովուրդի պաշտելու ձեռք հետ անհուսեցայ : Լսեցի ձեր խօսքերը և սուսած պատասխաններիդ, որով համոզուեցայ հանդարտ խղճովս թէ, զուր էք խաչագողներէն մին, ձեզմէ հեղինակաւոր աւելի և նուազ խաչագողական խմբակ մը է եզեր որ անխիղճօրէն ժողովուրդի ճակատագրին հետ խաղցած է. մեր այդ բաւական խօսակցութեան վերջ, ձեր ճառածու աղաչանքին և լալապին պաղատանքին կարուկ կերպով պատասխանեցի :

Ժողովուրդի ճակատագրին հետ խաղցող, ժողովուրդի շահերը ստանալու ընող անխիղճ խաչագողներու համար անկողնք ևն, պէտք է վերադառնալ իրեղէնները կամ արժէքը . . .

Ճարահատեալ զիմեցիք ձեզ նման բարեկամ մը, ինքզինքնիդ ազատելու յոյսով մը և ճիգով մը ամենաստոր և ամենազտոտ դաւադրութիւն մը պատրաստեցիք մեզ դէմ : Իսկ վերջը : Ամօթոյ սեւ մուր մը ունեցաք ձեր ճակատին վրայ, կրանի թէ ձեր այդ ամենազտ արարքները ձեզիդ դատ մը ըլլար :

Կարծեմ հիմայ հասկցաք թէ այդպէս չիւնձու խօսքերով հրապարակ իջնելու գուր է, և բնաւ պէտք չէր ձեր նամակի մէջ այդպիսի խոշոր խոշոր սուտեր և չինձու բռնար գեանդել : Ինչպէս կըսէք :

«Անուանս չուրջ ազատ տարածայնութիւններ կը պտտին» : «Միայն մուկին մէջ հալածանք ուղղուեցաւ» : «Ես կրէք անդեկութիւն ունեցած չեմ այն սրկական գողութեան ու և է պղտիկ պարագային» : Արդէն կարեւորութեան զուրկ է ձեր սպանալիքները : Եթէ կրէք բոլորակներ ունենայիք՝ անոնք ձեզի խորհուրդ պիտի տային, խաչագողներու ունեւները յայտնել՝ կամ ապրանայ արժէքը վճարել, որովհետեւ ձեր ազատութեան միակ միջոցն այս է :

Նախնայի մէջ ընկերական ատեան մը կազմուելու համար, չէքոք, անկողնակալ և պատուաւոր անձինքներ շատ կան, հետեւաբար կարելի է այդ ատեանը կազմուի. բայց ինչ որ ցաւալի է դուք մինչեւ հիմայ չը համոզուեցաք թէ, ձեր խաչագողութեան խմբակէն շատեր աշխատեցան իրենց մեղաւորութեան հետքեր կորսնցնելու և հետաքրքիրներու աչքին թող լիչել, այդպիսիներու ջանքեր զուր էին և զուր պիտի մնան, որովհետեւ որչափ գողն է զատապարտելի այնչափ ալ գողցուողն, որչափ խաչագողն է յանցաւոր այնչափ ալ պատասխանատուն, քանի որ խմբակ մըն է ժողովուրդի ճակատագրի հետ խաղացող և շահեր ստանալու բնող, ամէնքն ալ միշտ զատապարտելի են :

Ընկերական ատեանի կազմուելուն մէկ տմիս պայմանաժամ որոշած էք, այդ պայմանաժամն զազանի մեքենայութիւն մը ըլլալն գիտենք, անչուշտ դուք կը հասկնաք մեր բռնաները, նորէն դատապարտ թիւն էլ . . . Դուք իբր ամբաստանեալ մը բնաւ իրաւունք չունիք պայմանաժամ որոշելու : միայն ձեր պատասխանը — ժողովուրդը — կարող է որոշել այդ պայմանաժամն որ դուք ինքզինքնիդ արդարացնէք, եթէ կրէք կրնաք :

Պ. Ալթրարմտեան, ինչպէս ձեզ բռնած եմ հիմայ նորէն կը կրկնեմ հրապարակաւ, իմ անհասական համոզումս և կարծիքս է :
 Ձեր խօսքերով և արտասանած

բառերով. խաչագողներէն մինն դուք էք, այդ խնդրոյ մէջ ձեզմէ. աւելի ճարպիկ եւ նուազ խաչագողներ կան. աւելի դուք պարտաւոր եք եւ պիտի կազմէք ընկերական առեւան մը ինքզինքնիդ արդարացնելու համար. որովհետեւ բոս օրինի. պէտք է ամբաստանեալ մը ինքզինքը արդարացնէ, ոչ թէ դատախազը ստեղծէ միջոցներ ամբաստանեալ մը արդարանալու համար:

Վերջապէս քանի որ դոք վարագործ բացած չէք եւ խոչոր դէմքեր երեւան հանած չէք, — կարծեմ չէք որ անար այս ձեր բացած խօսքերը — միշտ դատապարտելի եւ ժողովուրդի նախատանաց արժանի պիտի մնայ, եւ հայ ժողովուրդը միշտ պիտի պահանջէ ձեզմէ իր իրաւունքը:

Յ. Կ. ՃԱՆԿԻՒՆԵԱՆ
Վառնա, 13 Մարտ

Յ. Գ. — Մէկ մէկ օրինակ ալ տեղական միւս թերթերուն զրկած ենք հրատարակելու համար:

Նոյն

Պ Ա Տ Ճ Է Ն

ՓԱՐԻՉ, 15 Յունիս 1899

Արգոյ պարոն

«Անհաճոյ զգացմամբ մը ձեռք առնուի կը ստիպուիմ զրիչս զրելու առ ձեզ առանց պատասխանին սպասելու իմ նախորդ նամակիս զոր բնորոշած էք անշուշտ: — Դուք ինձ անձն մը ներկայացուցած եղաք, ՊՐ. ՏԻԿՐԱՆ ՃԳՆԱՒՈՐԵԱՆ անուամբ ի Մարտէլ, եւ կերպով մը վերաբերութեան մէջ գրած, որուն կէքը պիտի պատմեմ ձեզ այժմ, որ կարծեմ շատ արտօնաբերի բան մը չէ, եւ ոչ ալ ձեզ համար պատուարներ, զի դուք զայդ անձը զովարանած էիք երկիցս ձեր վերջին Մարտիլայէ գրած նամակներու մէջ. թէ «ազնիւ եւ պատուաւոր վաճառական մի է»: Արդարեւ եթէ անշուշտութիւնը խօսքերու եւ գրոց վրայ կայացեալ է, ինձ արդարեւ շատ եւ շատ ազնիւ նամակներ գրեց, որոցմէ մեզը կը կաթէր. եւ կրնար ժամանակին սակաւութիւնը նայելով որ այն ինչ ձեր միջոցաւ վերաբերութեան մէջ մտած էր. հետո, մրցիլ ումանց նոյնպիսի շողոքորթ լեզուի եւ գրութեանց հետ որք զես խօսքերու մէջ կը փայլին, բայց արդիւնք եւ ոչ ինչ, իսկ պատուաւորութեան կողմանէ այնքան վրէժ-խնդիր, որ փոխանագրոց հասուցման համար կը զգուշացնէր զիս որ չըլլաւ թէ ի տուն չի գտնուելովս, փոխանակագիրը եւ գտնուեալս եւ իր պատուոյն եւ արժանապատուութեանը դպչի:

Այս տողերը եւ այս բացատրութիւնները հաճութեամբ կարդացի, որք կը հաստատելին ինձ ձեր առ նա նկատմամբ տուած վկայութիւնները: Ինչպէս զիտէք, փոխանակագիրը հատուցուեցան, եւ ահա նոր թղթակցութեան նիւթ բացուեցաւ մէջերնիս հանդերձ յանձնարարութեամբ մը, որ շատ հաճելի մը չէր ինձ, բայց սիրով յանձն առի կատարել թէ մարդասիրական նկատմամբ, եւ թէ «պատուաւոր» անձի մը ծօնայտ ինչն մը ընելու փափաքով:

Բայց պատմութիւնը կարճի կապեմ: Թշուառ հայ ճամբորդներու համար որ Ամերիկայէ եկած իրենց հայրենիքը կուզեն դառնալ, կը խնդրէր որ այստեղ բարեկործանական ընկերու-

թեան միջոցաւ կէս ամսակ առնել վեց հոգւոյ համար զոր ինձ ուղած էր յանձնել իրր վստահելի անձն: — Դրամը զրկուեցաւ եւ ամսակներն ալ ինքը ընդունեցաւ, բայց 10 Ֆր. պակասելով զրգանէս տալ հարկ եղաւ, եւ մինչեւ հիմայ թէեւ գրեցի իրեն, բայց չի հասուցուեցաւ, այլ անոր փոխարէն դարձեալ խնդրեք վրայ հասաւ որ ուրիշ 15 անձանց խմբի համար եւս վերադառնալ կէս ամսակ ճարմ: Գնադատներ եղան Բարեկործանական կողմանէ, եւ նոյնիսկ Մէսս-ժրոխի կողմանէ, բայց ես անձամբ ներկայանալով, ի մեծարանս երեսացս տիրէկթօրը ազնուութիւնը բաւ այս մեծ շնորհքն ալ ընելու: Հիտագրուեցաւ ՊՐ. ՃԳՆԱՒՈՐԵԱՆԻՆ, (զի ինչպէս առաջին անգամը, նաեւ այս երկրորդ անգամ ալ այս երկու գիրքը կրնէր օրը օրին նեղը զնելով զիս որ ժամանակ չըլլայ խորհիլ եւ գործ տեսնել) — որ զձեր բրածը (ներքէք բերու) ինձ կը յիշեցունէր: Գրկուեցան 600 եւ այսչափ Ֆրանք (որ կարծեմ իմ 600 Ֆրանքս էր) եւ կէս ամսակներն ալ ընդունեցաւ ինքը ամենայն անպարանօք: Զի մտնում ըսելու որ ամսակաց բուն զինն 70 եւ այսչափ Ֆրանք ըլլալով, Մէսսժրոխի ուղեց 40 Ֆրանքի տալ: Համարեցայ որ գործը լմեցաւ եւ ես այս ապակալի զբաղումն եւ հոգէն ապաստեցայ, որ բաւական ժամանակ վաճառել տուաւ ինձ. բայց չէ, փաստաւոր հետեւանք մը կայ եղեր զլուխս փրթելիք: Երկու երեք օր վրայ անցած, առաւօտ մը նամակ մը ընդունեցայ Մէսսժրոխի տիրէկթօրէն որ զիս անհրաժեշտ կուզէր տեսնել նոյն օրը. գնացի բոս ժամագրութեան զարմանօք թէ ի՞նչ կրնայ ըլլալ կանչուիլս, — ի՞նչ լսեմ աղէկ, Արգոյ Պարոն Դու որ, բոսեցաւ ինձ, եկար մեզի եւ կէս ամսակաց համար խնդրեք ըրիր թէ աղքատ ճամբորդաց համար է, այդ ամսակները ի Մարտէլ կրկին գնով վաճառուել են, եւ գործը մէջտեղ կելր է, փոխուած մէջ մտեր եւ անպիսի խաչագողութիւն խաչագողութիւնս, — եւ ես աստ գործոյն կերպով մը պատասխանատու: Կարծես կեցած տեղոյս շէնքը զլուխս փաւ: Տուն եկայ եւ անմիջապէս նամակ մը գրեցի այդ ձեր բարեկամին, եւ առաւ ժամանակ հաշու ընելով պատասխանը ընդունելու որ այս առաւօտ հասնելու էր անշուշտ այսպիսի կարեւոր խնդրոյ մը համար. լուութիւն է, եւ նամակ չի կայ, (ինչպէս լուութիւն է 10 Ֆրանք հաշուոյն վրայ): Ահա այդ սպասարթութեան ներքոյ զներկայս կը գրեմ ձեզ, Հաճեցէք ուրեմն պատասխանել ինձ թէ ո՞ր էր այդ ՃԳՆԱՒՈՐԵԱՆԻՆ, որ ասան եւ ի՞նչ տիրէկթօրէն մէջ զինքը ձանցած էք, ի՞նչ հաւաստի ունէիք իրեն պատուաւորութիւնը որ թէ ինձ վէճակեցիք եւ որուն հետ գործակցութեան ալ մտած կերեւիք: Կը յիշէք այն առածն նշանաւոր թէ «ճանչցու ինձ քու բարեկամք, եւ ես ըսեմ քեզ թէ ինչպիսի մէկն ես դու»: Տեղի չէ եւ ստիժ տուած չէք ըլլար ինձի, Պարոն, որ եւ կասկածիմ այժմ նաեւ ձեր վրայ, երբ ձեր բարեկամները եւ գործակիցք այնպիսի անձինքներ են: Կարէք արդեօք ըմբռնել եւ երեւակայել սրտիս յուզումները որ այս վերջին օրերուս եւ սոյն այս ժամուս կը կրեմ: Անկեղծաբար ըսելու եմ, որ արդէն ձեր վերջին գործառնութիւնը, որ օրը օրին ամենանեղ եւ նոյնիսկ հիւանդ վրձակիս մէջ զիս նեղը գրեք երկուսրոյ մէջ զիս զնելով, կամ նեղուիլ

եւ կամ կորուստ մը տուծել, — բայց ինչ եւ է յանձն առի, եւ թէեւ բռնկին վարձքը մնաց վրայի հագուստ, որ կը թափթփի կոր, չի կրցայ շինել, բայց ձեր յաջողութիւնը փաստեղ ազատելուն համար յանձն առի. իսկ անոնց փոխարէն այժմ այս ստակալի մահացումը կրել, այդ անտանելի է, զի զէն այն է որ ինչպէս տիրէկթօրին ըսել հարկ եղաւ, եւ նոյնիսկ Բարեկործանական Ընկերութեան (որուն կամչնամ կոր երեւայ) ի՞նչպէս ըսելու եմ թէ այդ ՃԳՆԱՒՈՐԸ ճանչցայ, րարեկալիս ներկայացուեցաւ զի պիտի ըսեն զէթ մտքերնէն թէ ի՞նչպիսիք են ասոր բարեկամները

Վերջապէս չեմ ուզեր աւելի երկար խօսիլ, այլ միայն կը սպասեմ ձեզնէ լսել վերի հարցմանց պատասխանները, եւ թէ այս եղածին ի՞նչ մեկնութիւն եւ բացատրութիւն տալիս ինչ կը խնդրեմ — եւ այն առանց յապաղման: Միւս կողմանէ տեղեկութիւն թէ ի՞նչպիսի էր այն զրամական վերաբերութիւնիդ որ կըսէիք հաստատած ըլլալ այդ վտանգաւոր անձին հետ եւ ինձնէ 600 Ֆրանք խնդրեցիք: Արդեօք ինչպէս հասկցայ, ա՞յդ անձին ձեռք պիտի վաճառէք ի Մարտէլ ձեր խահուէնները:

Վերջացունեմ ողջունելու մտով անհամբեր պատասխանոյն: (*)

Ճշգոյթեանը համար կը ստորագրենք:

ԿՐՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ,
Վ. ՇԱՀՐԻՄՅԱՆ
Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆ
Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ
Վառնա, 24 Օգոստոս 1899

ԻՆՉՊԵՍ ԶԸ ԾԻՄԱՂԻՍ

Երկար տարիներէ ի վեր է որ ամերիկայի միացեալ նահանգաց մէջն եմ եւ միշտ քաղքէ քաղք փոխադրուած եմ երկրի անյարմար դիրքին առթիւ. ուր որ ոտք գրած եմ այնտեղ տեսած եմ բազում իզլիացած եւ ալգային գործերէ քաջուած հայ զաւուր մը, որունք 10—15 տարիներէ ի վեր հեռացած ըլլալով Մայր Հայրենիքէն բոլորովին ձուլուած են տեղացիներու հետ. ամէն ինչ մոռցած են — հայրենիք, հող, տուն, կին զաւակ եւ այլն: Իրենց ամբողջ ուշքը դարձուցած են զբաղելու այն գործարաններու մէջ, որոնց խեղդող մթնոլորտի մէջ կը գործեն հազարաւոր գլխիկոր գործաւորներ լոյ մի քանի սուլար դիզելու համար:

Որչափ ցաւալի էր տեսնել այս զաւուրներու վիճակը, իրենց անտարբերութիւնը Եւ ի՞նչ մեծ ցաւ երբ երկու հայ իրարու կը հանդիպէին ո՛ր է տեղ մը, պժգանք կը համարէին իրարմէ բարեւ առնելը եւ կամ երբ նոր զաղթած հայ մը ոտք կը կոխէր

(*) Ահա ձեզ տաճկական լրտես Բալչէի «սրտաչ» մէկ ուրիշ քաջագործութիւնը:

Ամերիկայ, պէտք էր սեսնալ թէ ի՞նչպէս կը յանդիմանէր հին դալ թականը նորեկ հայը, այս խօսքերով «ինչո՞ւ հկար այս երկրորդ. սեւ շունը զրկեցին ետեւէդ. թէ չէ՞ կարմիր մոմը»: Այսպէսով հաղար ու մէկ բամբասանքներէ վերջ կը հեռանար իրմէ: Խեղճ նորեկ հայը երկրին եւ լեզուին անձանթ լինելուն թափառակաւ նի մը պէս կը շրջէր փողոցներու եւ պողոտաներու մէջ, ինքնօգնութեամբ պիտի յաջողէր գործի մը ձեռնարկել եւ կամ թէ ուրիշներու գործիք պիտի դառնար այսինքն խաչագողներու:

Այս ամէն ըսածներս թերեւս անհեթեթ թուի յարգելի ընթացողաց. սակայն այս դատմանը խաչագողներու եւ կամ աղքատի ցեցերու թակարթ ինչալով, միշտ ու միշտ արգելիչներ կը հանդիսանան շատ մը բարեկամաց գործերու. անշուշտ այս խաչագողներու նպատակը շահ ըլլալով տանակոխ կընեն այն ամէնը ինչ որ սուրբ եւ նուիրական է: Սակայն աւելորդ է ըսել թէ շաղկարտի մը պաշտօնը միշտ եղած է եւ պիտի ըլլայ զինիւ բարեմիտ ժողովուրդ մը իրարու գէժ, առեւթիւն յարուցանել անոնց մէջ, եւ վերջապէս պառակտել, որպէս զի այդ պառակտողներէ գէթ մաս մը ալ իրենց աղքեցութեան տակ ձգեն, ի հարգէ տուանց ուրիշի մը թշուառանալուն՝ չես կրնար երջանկանալ «օրինակը լուս սերտ» սած են այդ խաչագողները, որպիսիք են պատուելի Եւհաննայ Պ. Ռ. Թորոսեան եւ այլք: Պատուելի Եւհաննայ արգէն ինքը հայ մը չըլլալով եւ հայութենէ ալ բոլորովին զերծ պարսիկ բարոյականով ուճացած եւ պարսիկ իւլէմայի մը յատուկ կերքով օժտուած, ինքզինքը բարեմիտ կը խեղճէ որ եկեղեցիի մը մէջ արտօնութիւն մը տան իրեն կարգ մը անկրօն հայերու քաւրով ինչպէս զանոնք քրիստոնէացնուլու համար: Պարոն խաչագողները այդ պատուակին տակ բաւական գործեցին. սակայն նոր գալթականները՝ որոնց մէջ գտնուեցան բաւական լուսամիտ երիտասարդներ, ամէն մէկ բաներու խորը թափանցելով, տեղական «Հայրենիք» թերթի շնորհիւ, շատերը գիմակազերծ ըրին. սակայն կարգ մը յիտագիմականներ իրենց «Չայն Կղերացի» թերթով կուզեն այդ ազնիւ թերթի վարկը կոտրել, ցաւալին այն է որ իրենց համար փոխանակ անոր վարկը կոտրելու եւս չես երբ կը տեսնեմ նորեկ հայ զաղթականութեան յառաջդիմութիւնը եւ այսպիսի վատերու, խաչագողներու դիմաւորութիւնը ըլլալը:

Ի՞նչպէս չը ծիծաղիմ:
Հայի Գեորգի
Փաթրարն, 4 Մարտ
—)(—

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ս

Ըսի ըստ ներու մէջ մանկէն չեմ ախորժիր, բայց չեմ ալ կրնար չի յայտարարել թէ Տօթթէօր Եաքարնանը բաւական կը ճանչնամ եւ կարելի չէ իրեն վերագրել ինքնագործի պէրը՝ կեզմ ստորագրութեան ներքեւ Ակնարկում խօսակցութեան առարկան միմիայն իր աշխատակցութիւնը եղած է։

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

ՄԻՇՏ ԱՆՊԱՏԵՆ

Վառնայի մէջ բնակութիւն հաստատող ոչ-բնիկ Պօլսեցի Ա. Պարոնեանի մահուանը առթիւ հանգուցելոյն ընտանիքը բարեհաճեր է նուիրել տեղոյս մասնաւոր վարժարաններուն 100 աւանդակ ֆերանք, ալքատ ուսանողներու համար, միեւնոյն ժամանակ կը տեղեկանանք թէ նորա չեն բարեհաճած գումար մը եւս նուիրել իրեն թողուած բաւական հարստութեան տեղոյս աղջային վարժարանաց ուր աղքատ ձրի ուսանողներու թիւը մեծ առատութիւն մը կը կազմէ, այս անպատեհութիւնը մենք չենք յուսար թէ ուրիշ բանէ առաջ եկած ըլլայ բայց եթէ անձնական հաջիւններէ թելադրուած ինչ որ վարժարանի մը սեմէն ներս չի մտներ, վարժարանը ընդհանրական յարկ մըն է ուր կը պատրաստուին ապագային համար ամեն բանի հանդէպ անկարող եւ անխելահաս, աղքին փոքրիկ մանկատիները որոնց համար միայն կրնան նպաստել մեր երկրորդի մը երրորդի մը օգնութիւնները, շատ կը ցուինք մենք, որ այսպիսի բաներու համար գրիչ ձեռք կանոններ, որովհետեւ մեր աղքին մէջ շատ կան, Մի՞թէ այս ինչ կամ այն ինչ թաղականին կամ հոգաբարձուին հակառակութիւն ունենալով մարդ մը պէտք է աղջային ունէ հարստութեան համար չի նպաստել, մի՞թէ այդ ընտրուածներու մէջ անկարողներ չեն կրնար գտնուիլ, բայց միայն մէկ անձի համար պէտք է ամէնքը զօհել, ոչ, բացարձակապէս ոչ, Պարոնեան ընտանիքը կը գտնուի այնպիսի գիրքի մը վրայ որ կարող էր ինչ որ մասնաւոր վարժարաններուն նուիրեց, կրկնապատկը նուիրել աղջային վարժարաններուն, կը կարծենք թէ պիտի ընէր եթէ աղջային մարմնոյն հետ ընդհարում չունենար, բայց աղջային մարմինը ուրիշ, աղքին աղքատ զաւակները ուրիշ, եթէ

(*) Պարոն Եաքարեան ու իր խմբագիրը կը յայտարարել թէ սուղիչները վարժարանը կզած միջոցին չեն աշխատակցած, Հիմա ինչպիսի է թէ Պ. Եաքարեան կրնայ պարզել որ նիւթերն էին իր գրչի ալ գրչի, Ծ. Խ.

թաղականները էսկապէս մեղաւոր էին Պարոնեանները պէտք էր զանոնք ամչցնէին, Մ.-Ս.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՐԷՆՍ, 4 Մարտ

Տակաւ առ տակաւ տեղոյս պալատին ալ դարեւն ելլող մեղուի նման պղպղալ սկսաւ հոտաւէտ ծաղիկներու գրոյ թռչկոտելով, 3-4 ամբս առաջ գրադարանի վարչութիւնը դիմած էր տեղոյս թատերախմբին որ ինչպատգրադարանի ներկայացում մը ստյուս ան ալ պատրաստած էր «անմահ Գուրեանի» «Սեւ Հոգերը» Այժմ կը պարտաւորիմ համառօտ տեղեկութիւն մը տալ, Երեկ երեկոյ թատերախմբին, քաղաքիս ամենամեծ սրահին մէջ «օգոյցներն» տեսանք, նպատակս չէ քննադատել որովհետեւ գիտեմ թէ որ աստիճանի կարող մարդիկն են զերասանները, այսինքն՝ զերասանի յարմարութիւնը երբէք չունին, ի բաց առեալ մի քանիսէ, աս տեսակ զերասաններէ կարելի չէր աւելին սպասել, Լայնցէք ինձ պարտներ, գէթ մի քանի դիտողութիւններ ընեմ նախ զերբ իր լաւ գոց ըրած չէիք, յուշարարի ձայնը ետեւէն մեր ազանջին կը հասնէր, նոյնպէս ալ շարժումներն իր յարմար տեղը չէիք գործածեր, անանկ ալ կանգնած տեղերն իր կը մնայիք, շատ անգամ ալ ձեզմէ վերջ եկող մը կը դիտէիք, կարծես թէ երես տեսի ալ կուզէիք որ ժողովուրդին ցոյց չէիք տար, ասոնք մեծ թերութիւններ են, ես չէի յուսար թէ 3-4 ամսուայ մը պատրաստութեանը վախճանը այս պիտի ըլլար, անչափ յանցաւոր չէք դուք որչափ յանցաւոր են զերասանները, Միմիայն չորրորդ արարուածի վերջի ազատութեան արձանը իր տեսակին մէջ եղակի էր, իսկ երկրորդ արարուածի Լենկիմուրի և իշխան Սերասայի պատերազմը երբէք չեղան որ ամենակարեւոր տեղը պիտի բռնէր ու յիշեալ պատերազմի ժամանակ ինչո՞ք ու տիրացու ժողովուրդը ուր հայ զօրքերը անձնատուր կըլլային, սկսաւ ծափահարել, Վա՛յ բեղ տիրացու ժողովուրդ, 200 էն աւելի հանդիսականներ կային, կը յուսամ թէ գրադարանին 18-20 տուարի շտաբ շահ մը քնաց, իսկ այս երեկոյ ալ նորէն տեղի ունեցաւ «չեղոր կուսակցութեան» այսինքն ոչ կուսակցական հրապարակային երկրորդ ժողովը, արդէն «Շարժում» ընթացողներուն ծանօթ է յիշեալ ժողովին ինչ նպատակ ունենալը, ու այս անգամ յաջողեցանք եօթը անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրել որոնց պաշ-

տօնը պիտի ըլլայ գտնել այնպիսի ժողովուրդական յեղափոխական անձնաւորութիւններ, որոնք պիտի կարգուին ժողովուրդի կողմէ իրը գաղափարներ քննելու երկու կուսակցութեանց ուղղութիւնները, երկու Մարտական և երկու Գաղափարական նոյնպէս ալ իրենց քարտուղարներով որոնք պիտի վիճարանին ու որ կողմը որ ճշմարիտ ուղղութիւն կը տեսնէ ժողովուրդը, այն կազմակերպութեան ոյժ պիտի տայ, եթէ վիճարանելիք ժողովը տեղի ունենայ ի՞նչ եղբակացութեան հանգիլը կը տեղեկացուենք, Սակայն մի քանի դիտողութիւններ ընեմ նոյն ժողովոյ Տօթթ. Գաղափարների ճառի մասին, որ այս անգամ ինչպէս ինքը ըսաւ բոլորովին տարբեր նիւթի վրայ կը խօսէր, հարկ չի կար քու գաղափարներդ նոյն ժողովին արտայայտել, եթէ դուք այդչափ գաղափար կազմած էք Գաղափարական և Մարտական սկզբունքներուն ու ուղղութեան մասին, ապա ի՞նչ հարկ կայ այս ձեռնարկին դուք ալ մասնակցիք, հիմա ես այն կը հասկնամ թէ դուք կուզէք որ մեծամեծ գաղափարներու տեղեկալ ըլլաք, կամ ուր դործ ունենալը, այդ իմ գաղափարէս շատ ու շատ վեր բան է, քիչ մը ուշ եմք մնացեր, ԹՊՏԵԱԼ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մեզ վստահելի անձէ մը կը տեղեկանանք թէ Աթէնք հաստատուած բնիկ պօլսեցի, ձուլիչ (աէօքմէճի) կարապետ Սէֆէրեանի քով «Ի նպաստ Վանայ սովետաց գումար մը կայ ժամանակէ մը ի վեր» Ամենուն ծանօթ է վանեցուց հայտկարօտ սրտածմբիկ վիճակը, Ուստի հրապարակաւ կը հարցնենք Պ. կարապետ Սէֆէրեանի, պատճառն ի՞նչ է որ իւր քով կազմ գումարը չը զրկեր պարարքարան կամ Վան, --Տէր Գէորգ քահանայ Հիւրմիւղեան պատրիարքարանի ներման արժանացած է և թոյլատրուած է Պուլկարիոյ քաղաքներէն միոյն մէջ պաշտօնավարել, --Վառնայի դպրոցատէր աղջայիններէն մին Աղգ. վարժարանաց համար 2 սոկիի արժողութեամբ ելեկտրական մեքենայ մը նուիրած է, --նոյնպէս ատաղձագործ Պ. Իսկէնտէր ձրիարար շինած է կշիւքի մը միայն մասը որ կը պատկանի Աղգ. վարժարանին, --Ստացանք «Ճաւիղ» հանդէսը որ կը հրատարակուի Վառնայի մէջ, Յետագայ համարներէն միոյն մէջ կը խօսինք առ այժմ միայն կրնանք ըսել որ լաւ տայտարութեամբ ճամբայ ելած է, --)(--

Ն. Ս. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Փ

Սուրինա, Պ. Ստեփան Մարգարեան. -- Մինչև րաժնեկներ եւ երգարանի դրամը շտանանք չենք կարող ուղարկել, նաև կը խնդրենք որ պարզ եւ մաքուր գրէք որ կարողանաք կարգալ, -- Ստարա Զակօրա, Պ. Մէճէլեան. -- Ձեր ազգականի դրամը յանձնած ենք ժամանակին, սիրաւորներն հասնելիքի 11 լվը մենք վար գրինք, որովհետեւ ան մերը իւրացուցած էր ուրիշ բաժանորդէ մը, հիմա մէկ լվը մեզմէ առնելիք ունիք, -- Ալեքսանդրիա, Մ. Տ. -- Ժամանակին ստացանք 12 ֆրանքը, -- Ի. քաղաք, է -- Դրամը ստացուած է, թերթերը մենք կանոնաւոր կը գրկենք, եթէ չի հասնիր, մեզքը փոստայինն է, -- Վառնա, եթէ կօչկակարներ, -- Ձեզ խրատողներն ապուշ եղած են, այնտեղ ըսուած էր կօչկակարը՝ ոչ թէ կօչկակարները, եւ այդ այն կօչկակարն է որ կը մեղադրուի 28 անտուկի խնդրոյն մէջ եւ որուն ապրանք յանձնելը անյարմար կը համարեն, այդ խնդրը յուզող թերթը, պատուիրդ այդ թերթէն պահանջեցէք, Ձէլիքս Ծօրը օրինակ կը բերէք, բայց այն գծախտարար թէլեւ բարձր գիրքի հասած, բայց Ծրանայի գէշ մարդոցմէն մին էր,

Ն. Ս. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Փ

«Շարժում» 210 թուով հրատարակեալ և Պուլկարիոյ Գերաշնորհ Այցելու հովիւ հօր ուղղեալ նամակի մը մէջ անուանս գէմ աչնարկութիւն մը տեղայ, ձեր Ս. հայրը այդ նամակին պատասխանելը բացարձակապէս աւելորդ սեպելովը պէտք տեսայ ներկայիս երկու խօսք ուղղել այն ալ հանրութեան յիշեալ բաց նամակին մէջ սխալ ցոյց տրուած և խճրճուած խնդրոյն համար, Ըստ նամակագիր պարոնին իբր թէ հարուստ հանգուցեալի մը յուղարկաւորութեանը բացառիկ պատիւ մը ընելու համար եկող մասնաւոր հայ աղջկանց կրթարանի մը սաները եկեղեցիէն արտաքսել ուղած ըլլամ, Այս գրութեամբ կուգամ հասարակութեան յայտարարել թէ այդ սաները եկեղեցիէն վճռուելու արարք երբէք տեղի ունեցած չէ իմ կողմէ, բան մը որ այդ կրթարանի պատուին ալ չի պիտի վարանի շիտակը խօստովանիլ ըստ իր կոչման, և չի ստիպեր վիս որ զինքը հրապարակաւ յին երկուսն ներքեւ առնեմ, ըսել տայու համար թէ զինքը և իր օսաները սրբավայրէն արտաքսելու գիտում չեմ ունեցած, Հայ եկեղեցին իր մէջէն զչ միայն չի վճռուել իր զաւակները այլ նոյնիսկ օտարազգիներուն անգամ չի տրուի որ այդպիսի պատասխան մը երբ այս վերջինք պատշաճից օրէնքէն դուրս չեն ելլեր,

Նոյնպէս աւելորդ չեմ տեսներ յարգելի նամակագրին իմացնել թէ իբրեւ քահանայ եթէ ոչ իրմէն աւելի, վստահ թող ըլլայ որ իրեն չափ գիտեմ պաշտօնիս կերպաւոր եկեղեցւոյ կանոնաց և մարդկութեան օրինաց համեմատ որոշն մէջ եթէ թերացած եմ կը խնդրեմ Գեր. Առաջնորդ հայրէն ու Աւագերեց քահանայէն որ յայտարարեն պակասութիւնս, որոնց ձայնը ամենէն աւելի լսելի է եկեղեցական շրջանակին մէջ. բայց վստահ ըլլալով մինչեւ ցարդ շաղհալեաց պաշտօնավարութեանս վրայ պիտի կըրնամ ըսել թէ պիտի նամակագրը հապճեպած է հրապարակ ինչնալու:

Մնամազօթարար
Սարգիս Գննյ. Ղարխլեան
Վառնա, 13 Մարտ

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԱՆՊԱԿՍՍ ԵՒ ՌՈՒՍԻԱ

(Շար. նախորդ սիւնի և վերջ)

Ռուսիան բնաւ վտանգ մը չի կար իր կանաչ փոքրիկ հայկական իշխանագետութիւն մը ունենալը՝ քանի՜ Թուրքիան—որ կրնայ մի մեծ պետութեան ձեռքը խաղալիք ըլլալ, և գոցէ իրեն վտանգաւոր է եթէ Լօպանով ու Պոլսոյ նախկին դեսպանը Նէլիտով չի սոսկացնէին ռուսերը այդ աներեւակայնի ուրուականի ներկայութեան, տիեզերքի մի մեծ հրաշքին հանդիսատես պիտի ըլլային. Ռուսիա ու Անգղիա ձեռք ձեռքի տուած պիտի ազատէին խալիֆաներու անտանելի ուժի միտի տակ մնացող վերջին գերիները, մահմէտական տիրապետութիւնը պիտի ոչնչանար և աշխարհը պիտի ազատուէր մի անգամէն այդ անուղղելի ու վայրագ ցեղի գործած խայտառակութիւններէն: Փոխանակ մի լիօնաւոր ժողովուրդներու ողբերգութեան կոծերու, որոնք Հայաստանի ու Մակեդոնիայի խորհրէն կը հասնին, մենք գերութեանէն ազատուածներու սրտաբուլի մաղթանքները պիտի լսէինք: Անգղիա հրաժարեցաւ թուրքերը պաշտպանէլէ վերոյիշեալ պատճառներով և երկրորդ որ Պոլսոյ իր առջի ռազմագիտական նշանակութիւնը կորսնցուցած է իբր «գիժարող կէտ» ծառայելու արշաւանքներուն: Ըստ Անգղիական սպայակոյտի հաշարայեան Սըլթըրընի տեղակալութեան, Սուէի շրանցքը ու Մալթայի կղզին ամէն առեւ կրնան Ռուսական ձգտումները ի գերեւ հանել: Սեւ Մովէն Անգղիոյ վախը միայն Ալլախի ստանէն է, և Անգղիա իր բոլոր ուշադրութիւնը հոն կեդրոնացնելու է, և ոչ թէ Վասփորը:

Կոմս Կոլուխովսքիի հաւասար մասերու բաժանման առաջարկու-

թիւնը Անգղիոյ մէջ լաւ տպաւորութիւն գործեց, Անգղիացիք պատրաստ էին սիրայօժար զիջումներ ընելով իրենց համար վերջնել միայն երջանիկ Արարիւն:

Սակայն Ռուսիա միանգամ ասհուկած Անգղիական խորամանկութեանէն աւելի խոշոր սխալ մը գործեց, որ յիտոյ հեղեղի արիւնով պիտի գնէ:

Ռուսիա ինքզինքը երեւակայնի վտանգներէն փրկելու գիտումով, իրական վտանգներու ու որոգայթներու մէջ ինկաւ, անորոշ կատկածներէ առաջնորդուած գիւտնադիտութիւնը սկսաւ խարխալիւ: Նա ազատեց Սուլթան Համիտը այդ մտալուտ մահուան ծանր ճգնաժամէն և իր դարևուր հակառակորդին կեանք շնորհեց: Իտալիան «Գրիպիւնա» թերթը այդ միջոցը յիշելով հետեւեալը կըսէ.

«Աշխարհումս մեծ սպաննութիւններու հեղինակը, իր յաւիտէնական քառութիւնը տալու օրին, Եւրոպայի քառ գիւտնագիտութիւնը իրեն կեանք պարգեւեց»:

Սակայն Սուլթան Համիտը պարտաճանաչ գտնուեցաւ. իր դրացիէն տեսած աջակցութեանը համար, նա փոխանակ Ռուսական քաղաքականութիւնը փայտայելու, ինչպէս որ յոյսեր կը տա՝ ձէին Լօպանովը ու Նելիտովը, աւելի Ռուսիան—իր ազատիչին անկեղծութեամբ փարելու, Գերմանիայի դիրքը նետուեցաւ:

Ամենուն յայտնի է թէ ինչ կացութեան մէջ է Թուրքիա Գերմանիայի հանդէպ. Սուլթան Համիտը Վիլհելմ կայսեր մէկ աւատական իշխանն է: Ինչ որ Պետլին կը տնօրինեն, Երլտըղի մէջ նոյնութեամբ ու օրինակելի հլուութեամբ կը գործադրեն: Թուրքիա զինուորական, տնտեսական տեսակէտով Գերմանական կայսրութեան ազդեցութեան տակ է: Այսօր գոռող Վիլհելմի փրօն ծրագրները ամենուն յայտնի է. նա Իտալիայուց երկրորդ տեստնեան ցեղին կը պատրաստէ. Գերմանացիք ժրպան կաշխատին իրենց նպատակներու իրագործման: Փոքր—Ասիոյ ամբողջ տարածութեամբ Գերմանական դրամազուլներով երկաթուղիներ կը շինուին, որոնք երկու նպատակի պիտի ծառայեն. առաջին տնտեսապէս կողպատել Թուրքիան և երկրորդ թիւրք գիւտնորներու սպառազինութիւնը փութացնել, և ի պահանջել հարկին Ռուսիայի Գերմանիայի միջեւ պատերազմ բացուած դէպքին Ռուսիայի կընդհանգէն գործել:

Գերմանական թերթերը միշտ հրաւէր կը կարգան իրենց հայրենակիցներուն փոխանակ հեռուոր երկիրներ երթալու ու իրենց ուժերը վտանգելու, աւելի յարմար է Փոքր—Ասիա գաղթել: Եզրակացութիւնը որ պարտինք

ընել, թէ Արեւելքի մէջ Ռուսիոյ ու Անգղիոյ հակադրութիւնը ու շահերու հակասութիւնը իր առջի ուր նշանակութիւնը կորսնցուցած է. թիւրք խարխուլ կայսրութեան ինքզինքը ժառանգ կը յայտարարէ յոյժ վտանգաւոր հակառակորդ մը, որ թէ Ռուսիան և թէ Փրանսիան կրողառնայ—առ Գերմանական ցեղն է, որ եթէ յաջողի եղէեան ծովու Փոքր Ասիայի մի անկիւնը տեղադրուել, Ռուսական ու Փրանսական շահերուն զգալի հարուած պիտի տայ:

Սակայն հարց է՞ իրապէս Ռուսիան թոյլ պիտի տայ որ Գերմանական ուստայնը հիստուի՞ ոչ երբէք! Ռուսիան հիմակ այդ մշուշի մէջ եղող երեսակայական վտանգներէն իրականը տեսաւ և ըմբռնեց թէ ինչեր կը նիւթուին իր հաշոյնապագային. մենք քիչ ատենէ իրմէ Թուրքիոյ դէմ գործնական քաղաքականութիւն մը կը սպասենք:

Նա ճանչցաւ իշխան Լօպանովի նէլիտովի բռնած սխալ ուղղութիւնը, որոնք կորստաբեր հետեւանքներ պիտի ստեղծեն Ռուսիոյ Ասիական քաղաքականութեան, և որոնք անմշակելի ու անիրական ստուէրներէն պետական վտանգները հեռացնելու նպատակով ազատ սպարէզ կուտային սլաւութեան ամենամեծ թշնամիին— Գերմանիան. ըստ «Իէսոգէր Լիօտի» Լօպանովեան քաղաքականութեան հակադարձ ընթացք տուող ու Չարը իրական վտանգներէն զոչնչացնելու տուողը, Ռուսիայի և Պետլինի դեսպանը եղած է Մուրադիէզի աջակցութեամբ:

Ռուսիա իր այս քաղաքականութեան մէջ իրեն զօրուոր զինակից պիտի ունենայ վերաւորուած Փրանսան, որ Գերմանիայէն իր տոհմական սիրը ու ազգային արատը հանելու բարեպատեհ քաղաքական հանգամանքներու ստեղծումին ուշագրաւ կը հետեւէր. առկէ աւելի յարմարագոյնը չի պիտի կրնար գտնալ:

Անգղիա առաջինն պիտի ըլլայ Թուրքիայի մահուան քուէն տուողը:

Սօֆիա, 6 Մարտ

ԹՂԹԱԿԻԾ

Ա Ձ Դ

Յառաջիկայ շաբաթէն սկսեալ երէք շաբաթ երեկշաբթի և շաբաթկշաբթի երեկոյները ժամը 7 1/2 ին տեղուոյս պուլկար բողոքականաց եկեղեցւոյն մէջ հայոց համար մասնաւոր աղօթքներ տեղի պիտի ունենան որոնց մասնակցութեանը հաւասարեալ հայ հասարակութիւնը սիրով կը հրաւիրուի:

—(—)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական քանի մը թերթեր կը հաղորդեն թէ Անգղիա և Ռուսիա համաձայնած են իրարու մէջ, որ Ռուսիա իր սահմաններու մօտիկ հայ նահանգները գրաւէ և միւս հայ նահանգներու մէջ անկախ հայ իշխանութիւն մը հիմնելուն չը հակառակի:

Այս լուրերը առ այժմ ստուգութեան չատ հետու են և միայն են թաղութիւններ են:

—Մարտ 11 ին Իսկիւպի մէջ պաշտօնապէս յայտարարուած է ներում և Վալի Հաֆզ փաշայի պաշտօնէն արձակումը: Այդ պատճառաւ խաղաղութիւնը բուլղարի վերահաստատուած է:

—Բարձրագոյն Գրան պատասխանը գետպաններու մաքսային սուրբի մասին տուած բողոքագրին, շատ զէչ տպաւորութիւն գործած է դեսպանական շրջանակներուն վրայ, Գետպաններու կողմէն աւելի խիստ բողոքագիր մը կը սպասուի:

—Օսման փաշայի մահը շատ ազդած էր Սուլթանին վրայ, որովհետեւ իրեն միակ հաւատարիմ և խելացի խորհրդատու բառեկամն է: Իբրեւ շատ ժողովրդական մարդ և միշտ Սուլթանի հետ մէկտեղ ըլլալով, մահմետականներու հանդէպ անոր պաշտպանի դերը կը կատարէր:

ԹՎՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱՆ»

«Վէսէլլօ» հայ դերասանական խումբը, վաղը գիշեր, Մարտ 18, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Ստանի որջը» արամ-գոմէտի 6 արար:

Միջնարարներու ատեն ռուս Պարոն և Տիկին Վլախիմիրօֆի կողմէ Տուէթ թօսներ:

Հաշակաւոր երաժշտապետ Տիար Տիգրան Չուհուճեանի հեղինակած «Լէպլէպլիճի Հօրօր» անուն օրէրէթը խմբիս կողմանէ փորձի տրուած է և որուն ներկայացման համար ամէն ջանք և զոհողութիւն չէ խնայուած:

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Չ
Տիկին Ե. ՉՕՐԵԱՆԻ (ՖԻԼԻՊԷ)

Կընդունուին 4—7 տարեկան մանուկներ, դասերը առաւօտեան 9—12 և և կէս օրէն վերջ 2—5:

Հետո բնակող մանուկները ճաշերին կրնան մանկապարտէզին մէջ ընել և մինչև դասերուն սկսուիլը մասնաւոր հսկողութեան տակ խաղալ:

Վճարը՝ ամսական ութը լէվ:

ՆՈՐ ԲԱՑՈՒՄԻՎ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Ա. ԳՐՈՒՆՅՈՅ
Վառնա (Մուսաղլա)

Կը վաճառուի բացի դանաղան դրպորոցական պիտոքներէ, ընտիր թէյ, առաջնակարգ սուրճ, նամակագրոյժ և անային մանր պիտոքներ նաեւ Շարժում:

ՍՊԱՆՍԻԱ «ВРАЧНОСТЬ» ВАРՆԱ